նադրութեամբ երկաթագիր Մեսրովպեան տառիւք յօրինեալ մուղայիւք։ Ուրեն դերեզմանք 'ի մի կարգ ծածկեալ կամարաւ, և 'ի վերայ նոցա հարթ հաւասար, յօրինուածք սքանչելի պատկերաց և ծաղկանց գոյն զգոյն մուղայիւք։ 'ի չորից մասանց մի մասն միայն զերծեալ, յորոց վերայ երեւի հոյակապ կամար դրան՝ եւ 'ի միջի նորա դաւն, 3 ձկունք յերիս շրջանակս՝ զանազանեալ 'ի միմեանց, արծիւ, ոզկոյզ խաղողոյ երկու, բաղ, և այլ ծաղիկք, եւ յեզրն արձանագիր այսպէս։

ԱՅՍ ԴԻՐ Է ԵՐԱՆԵԼՈՒՀՈՒ ՇՈՒՇԱՆԿԱՆ ՄԱՒՐՆ ԱՐՏԱՒԱՆԱՅ ՀՈՌԻ ԺԸ։

Արտաւան որդի Յովհաննու Արշակունւոյ (539), ցուցեալ բազում քաջութիւնս 'ի պատերազմին Խոսրովու Պարսից արքային, ապա զինուորեալ 'ի դուռն Կայսեր, առաքեցաւ յԱփրիկէ ընդդէմ Գանթարայ։ Տէս Պոպ։ Հայոց, Հ։ Մ։ Զամչեան։ Հատ։ Բ։ 241։ 251։ Մայր սորա Շուշանիկ եկեալ յԵրուսաղէմ վախճանի, և թաղի անդ 'ի վանս Ս։ Կարապետին, որ եւ յետոյ որդի նորին տայ յօրինել շիրիմ 'ի վերայ նորա։ Իցէ թէ և յաւերեալ տեղիսն հին նշանակք եւ արձանագիրք թերեւս յայտնէին զանուանս այլոց, այլ դաժանութիւն ժամանակին ծածկեալ է զայնս։

Մերձ սոցա են 2 բաւիղք իբր չորեմարան։ 'ի միումն նկարեալ էին Խաչք 3 'ի վերայ ծեփի, և 'ի միւսումն երեւէին հայեցի տառք։ Ի վերայ սոցա կառոյց վանահայրն Ռուսաց սենեակս՝ անեղծ պահելով զհնութիւնսն։ սորա հիւսիսային կողմն է աւերակն եկեղեցւոյ, զոր քանդեալ վանահայրն կառոյց 'ի տեղի նորա սենեակս վայելուչս, և առաջի նորա անկեաց զանուանս նոմեաց։

Յարեւելից կուսէ չինուածոյս դտանին 16 դամբարանք չինեալք քարուկիր երկկարգ ուրոյն ուրոյն, ոմանց կափարիչքն ամբողջք և ծածկեալք, եւ ոմանց խորտակեալ եւ բացեալ։ 'ի վերայ նոցա ընթերցեալ լինին անուանքդ ՋՈՋԻԿ։ ՇՈՒՇԱՆ եւ ՄԱՐԻՆ։ և այլքն եղծեալ են։

Սակաւ ինչ հեռի 'ի սոցանէ է և առանձին շիրիմ, յորոյ վերայ յօրինեալ և դրեալ է մուղայիւք յետագայ տապանագիրն։